

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ ԲԲԸ-ի (այսուհետ նաև՝ Դեպոզիտարիա) ծառայություններից օգտվելու նպատակով տալիս եմ իմ համաձայնությունն առ այն, որ.

✓ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ ԲԲԸ-ն (ՀՀ, ք. Երևան, Վ.Սարգսյան փողոց 26/1) իմ՝ հաշվետեր հանդիսանալու ամբողջ ընթացքում ինձ մատուցվող պահառության կամ ինձ պատկանող արժեթղթերի գծով ռեեստրավարման, ինչպես նաև Դեպոզիտարիայի կողմից մատուցվող այլ ծառայությունների համար, ծառայությունների մատուցման ամբողջ ընթացքում, հարցումներ կատարի «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի միջոցով (ԷԿԵՆԳ) և ստանա, ինչպես նաև մշակի և օգտագործի ներքոնշյալ մարմինների կողմից տրամադրվող հետևյալ տեղեկատվությունը.

- ՀՀ Ոստիկանության բնակչության պետական ռեգիստրից (անձը հավաստող փաստաթղթի տվյալները՝ տեսակը, համարը, տալու ամսաթիվը, վավերականության ժամկետը և տրամադրող մարմինը, դրանում նշված քաղաքացու անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, ծննդավայրը, սեռը, մահացած է, մահվան ամսաթիվը, ՀՕՀ-ն, ՀՕՀ չունենալու վերաբերյալ տեղեկանքի համարը, քաղաքացիությունը, ինչպես նաև բնակչության/հաշվառման վայրի հասցեն և լուսանկարը),
- ՀՀ Արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությունից (Քաղաքացիական կացության ակտի համար (ամբողջական), ակտի տեսակ, գրանցման ամսաթիվ, գրանցող բաժանմունք, վկայականի համար, վկայականի ամսաթիվ, նույնականացման համար, հայտը, դիմողի տվյալներ, առկայության դեպքում, եթե անձի վերաբերյալ հայցվող տեղեկատվությունը՝ վկայականը, պարունակում է՝ հոր/ամուսնու/մահացողի տվյալներ, կնոջ/մոր տվյալներ, երեխայի տվյալներ, ծնողներ, քույրեր և եղբայրներ, երեխաներ, ամուսնու տվյալներ, այլ նյութեր, փոփոխված ակտի տվյալներ, ազատ նշումներ, բնակչության վայրերի լրիվ ցանկ, կից նյութեր, մահվան մասին տեղեկություններ, վկաներ և ցանկացած այլ տեղեկատվություն),

Տեղեկացված եմ, որ սույն համաձայնությունը, ինչպես նաև Դեպոզիտարիայի կողմից սույն համաձայնության հիման վրա ստացված անձնական տվյալները կարող են հետ կանչվել, ուղղվել, ոչնչացվել, իսկ տվյալների մշակումը՝ դադարեցվել, իմ գրավոր դիմումի հիման վրա, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, ինչպես նաև այն մասին, որ սույն համաձայնությունը հետ կանչելու դեպքում Դեպոզիտարիան իրավունք ունի դադարեցնել ինձ ծառայությունների մատուցումը:

Անձնական տվյալների հավաքագրման, մշակման և օգտագործման նպատակով տրված համաձայնությունը կարդացել եմ, գիտակցում եմ և համաձայն եմ դրա հետևանքների հետ:

_____/_____/_____
Անուն, հայրանուն, ազգանուն Ստորագրություն Ամսաթիվ Անձը հաստատող փաստաթուղթ

Հեռ.՝ _____, Էլ. հասցե՝ _____

Ծանուցման հասցե՝ _____